

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարվել է 2013թ. փետրվարի 18-ին կայացած ՀՀ նախագահի ընտրությունների նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները.
- Նախագինակոչային հասակի /1998թ ծնված/ պատանիները ներկայացվել են Էջմիածնի զինվորական կոմիսարիատ՝ բժշկական հետազոտման, անմիջական աջակցություն է ցուցաբերվել զարնանային զորակոչին, ապահովել է զինապարտների ակտիվ մասնակցությունը հայկական բանակի զորավարժանքներին.
- Մերձավան համայնքի 2013թ., առաջին կիսամյակի ֆոնդային բյուջեն կազմում է 2 113 800 դրամ, ծախսային մասը կազմել է 6 020 200 դրամ.
- Մշակույթի տան 18 131 854դրամ արժողությամբ պարսպապատման աշխատանքների նախագծահաշվային փաստաթղթերի կազմման համար տրամադրվել է 520 000դրամ գումար.
- Համայնքի սոցիալապես անապահով 27 ըտանիքների տրամադրվել է 1215.0 հազար դրամ դրամական օգնություն, որը հատկացվել է նոր ծնված երեխաներին 300 000 դրամ.
- Բնական աղետից՝ կարկտահարությունից Արմավիրի մարզի, տուժած գյուղացիներին տրված է սոց օգնություն 1 000 000դրամ.
- Հեռուստահաղորդումների նկարահանման համար վճարվել է 250 000 դրամ.
- Թերթերի բաժանորդագրման համար վճարվել է 250 000դրամ գումար.
- Գյուղապետարանը „Կանանց միջազգային օրվա,“ և „Մայրության, գեղեցկության օրվա կապակցությամբ գյուղապետարանի, փոստի, մանկապարտեզի, մշակույթի տան, բուժ անբուլատորիայի աշխատակիցների նվերների զնման համար ծախսել է 200.0 հազար դրամ.
- 2012-2013 ուս տարվա դպրոցի ավարտական դասարնցիներին համար գնվել է մայրաքաղաքի համերգասրահներում կայացող համերգի 100 000դրամ արժողությամբ տոմսեր:
- Գյուղապետարանը Մերձավանի մանկապարտեզին նվիրել է 60 000 դրամ արժողությամբ երաժշտական գործիք՝ սինթեզատոր, Մարտի 8-ի, Ապրիլի 7-ի միջոցառումները, տիկնիկային թատրոնների կազմակերպումը հովանավորել է համայնքի ղեկավարը.
- Մանկապարտեզի աշխատանքները կոորդինացնելու, ժամանակին ու անթերի կազմակերպելու համար 2013թ, առաջին կիսամյակին տրամադրվել է, որպես սուբսիդիա՝ 1 813 1854դրամ /ուղղվել է աշխատավարձի, կոմունալ ծառայությունների, սննդի , նորոգումների և սարքավորումների ձեռք բերմանը/.
- Քաղաքացիների , ինչպես նաև «Երկրագործության և բույսերի պահպանման» գիտական կենտրոն ՊՈԱԿ աշխատակիցների, դիմումների հիման վրա դարձյալ կատարվել է համայնքի բնակիչների և այգեգործական ընկերության անդամների հողակտորների չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ.
- 2013թ. առաջին կիսամյակում գյուղապետարանը բնակիչներից ստացել է 43 դիմումներ, որոնք քննարկվել են և ժամանակին տրվել են պատասխաններ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 465 տեղեկանք, ստացվել է 94 պաշտոնական նամակներ, բոլորն էլ քննարկվել և ժամանակին պատասխանվել են 104 նամակներով, գումարվել է ավագանու 4 նիստեր, համայնքի ղեկավարի 8 կարգադրություններ և 37 որոշումներ.
- Կատարվել է համայնքային սեփականություն հանդիսացող 7 հողամասերի օտարում աճուրդային վաճառքի կարգով, համայնքային սեփականություն հանդիսացող 2 հողամասերի վարձակալության տրամադրում և համայնքային սեփականություն հանդիսացող 1 հողամասի և նրա վրա ամրակայված շենք-շինության վարձակալության տրամադրում:
- Ժամանակին կատարվում է երեխաների բժշկական պրոֆիլակտիկ պատվաստումները, հաշմանդամության կարգ ունեցող բնակիչները և 0-7 տարեկան հիվանդ երեխաները ստանում են իրենց անհրաժեշտ, անվճար դեղորայքը.

- Մերձավան համայնքի ֆուտբոլային թիմը մշտապես մասնակցում է հանրապետական, մարզային առաջնություններին, ֆուտբոլի փնջային մրցաշարերին և բազմիցս արժանացել է պատվոգրերի:
Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան «Մերձավան-98» թիմին 2012-2013թթ Հայաստանի ֆուտբոլի մանկապատանեական Մ-15/Բ/ առաջնությունում առաջին տեղը զբաղեցնելու համար հատկացրել դիպլոմ:
- Վարչապետ Անդրանիկ Մարգարյանին հուշամրցաշարում 2013թ առաջին տեղը զբաղելու համար ստացել են դիպլոմ և գավաթ: Բոլոր միջոցառումների կազմակերպմանը և մասնակիցների տեղափոխմանը աճակցել է գյուղապետարանը:
- Համայնքում գործում է «Արեգակ», վարկավորման ծրագիրը, մասնակիցների թիվը շարունակական ավելանում է, որը համայնքի կին բնակիչներին հնարավորություն է տալիս զարգացնելու իրենց բիզնեսը:
- Համայնքում աղբահանման աշխատանքները կազմակերպելու համար փոխանցվել է 600 000 դրամ, այն կատարվում է շաբաթական երեք անգամ:
- Հաճախակի փոխվում է գիշերային լուսավորության վառված լամպերը, ծախսվել է 100 000 դրամ:
- 2013թ.առաջին կիսամյակում, Մերձավան համայնքի առաջին փողոցում փոխվել է խմելու ջրի 60 գծամետր երկարությամբ ջրագիծ, ծախսվել է 80.0 հազար դրամ:
- Ոռոգման հողային հունով առուների մեջ տեղադրվել է 250մ օգտագործված բետոնյա կիսախողովակներ և ծախսվել 110 000դրամ գումար:
- Համայնքի խաղահրապարակում տեղադրվել է սահնակներ և ճոճանակներ, Մասիսի փողոցում մոտ 200քառակուսի մետր տարածություն հարթեցվել է երկրորդ խաղահրապակը կառուցելու համար, ընդամենը ծախսվել է 500 000դրամ:
- Համայնքի կոյուղին շատ հին է և հաճախակի նորոգման կարիք է ունենում՝ 2013 թվականի առաջին կիսամյակում շուրջ 200 գծամետր կոյուղու ջրագիծ է մաքրվել՝ ծախսվել է 200 000 դրամ:
- Գյուղապետարանը, ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության .
- Գյուղապետարանը մշտապես աջակցում է բնակչության էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատակարարման, գազամատակարարման, կոյուղու սպասարկման ծառայություններ իրականացնող աշխատակիցներին:

2013թ-ին համայնքի հիմնախնդիրներն են.

1. Գյուղապետարանի շենքի տանիքի վերանորոգում
2. Դպրոցի վերանորոգում.
3. Ոռոգման համակարգի որոշակի հատվածի վերակառուցում
4. Փողոցների մասնակի ասֆալտապատում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



L. ԳՐԻԳՈՐՅԱՆ

11.07. 2013թ.

գ.Մերձավան

Ժողովը նախագահում է համայնքի ղեկավարի տեղակալ՝ Ա. Եսայանը
 Ժողովը քարտուղարում է գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Զ. Գևորգյանը

Ժողովին մասնակցում է մարզպետարանի ներկայացուցիչ՝ Ա. Գովհաննիսյանը, ժողովին ներկա էին համայնքի 116 բնակիչ.

Լսեցին - Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ղեկավարի հաշվետվությունը՝ 2013թ-ի առաջին կիսամյակի կատարված աշխատանքների վերաբերյալ (զեկ. համայնքի ղեկավար Լ.Գրիգորյան).

Ժողովը արձանագրում է, որ Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքում 2013թ-ի առաջին կիսամյակում կատարվել են ներքոհիշյալ աշխատանքները.

- Օրենսդրությամբ սահմանված կարգով, կատարվել է 2013թ. փետրվարի 18-ին կայացած 33 նախագահի ընտրությունների նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները.
- Նախագինակոչային հասակի /1998թ ծնված/ պատանիները ներկայացվել են Էջմիածնի զինվորական կոմիսարիատ՝ բժշկական հետազոտման, անմիջական աջակցություն է ցուցաբերվել զարմանային զորակոչին, ապահովվել է զինապարտների ակտիվ մասնակցությունը հայկական բանակի զորավարժանքներին.
- Մերձավան համայնքի 2013թ., առաջին կիսամյակի ֆոնդային բյուջեն կազմում է 2 113 800 դրամ, ծախսային մասը կազմել է 6 020 200 դրամ.
- Մշակույթի տան 18 131 854դրամ արժողությամբ պարսպապատման աշխատանքների նախագծահաշվային փաստաթղթերի կազմման համար տրամադրվել է 520 000դրամ գումար.
- Դամայնքի սոցիալապես անապահով 27 ըտանիքների տրամադրվել է 1215.0 հազար դրամ դրամական օգնություն, որը հատկացվել է նոր ծնված երեխաներին 300 000 դրամ.
- Բնական աղետից՝ կարկտահարությունից Արմավիրի մարզի, տուժած գյուղացիներին տրված է սոց օգնություն 1 000 000դրամ.
- Դեռուստահաղորդումների նկարահանման համար վճարվել է 250 000 դրամ.
- Թերթերի բաժանորդագրման համար վճարվել է 250 000դրամ գումար.
- Գյուղապետարանը „Կանանց միջազգային օրվա, և „Մայրության, գեղեցկության օրվա կապակցությամբ գյուղապետարանի, փոստի, մանկապարտեզի, մշակույթի տան, բուժ անբուլատորիայի աշխատակիցների նվերների գնման համար ծախսել է 200.0 հազար դրամ.
- 2012-2013 ուս տարվա դպրոցի ավարտական դասարնցիներին համար գնվել է մայրաքաղաքի համերգասրահներում կայացող համերգի 100 000դրամ արժողությամբ տոմսեր:
- Գյուղապետարանը Մերձավանի մանկապարտեզին նվիրել է 60 000 դրամ արժողությամբ երաժշտական գործիք՝ սինթեզատոր, Մարտի 8-ի, Ապրիլի 7-ի միջոցառումները, տիկնիկային թատրոնների կազմակերպումը հովանավորել է համայնքի ղեկավարը.
- Մանկապարտեզի աշխատանքները կորոդինացնելու, ժամանակին ու անթերի կազմակերպելու համար 2013թ, առաջին կիսամյակին տրամադրվել է, որպես սուբսիդիա՝ 1 813 1854դրամ /ուղղվել է աշխատավարձի, կոմունալ ծառայությունների, սննդի, նորոգումների և սարքավորումների ձեռք բերմանը/.
- Քաղաքացիների, ինչպես նաև «Երկրագործության և բույսերի պահպանման» գիտական կենտրոն ՊՈԱԿ աշխատակիցների, դիմումների հիման վրա դարձյալ կատարվել է համայնքի բնակիչների և այգեգործական ընկերության անդամների հողակտորների չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ.
- 2013թ. առաջին կիսամյակում գյուղապետարանը բնակիչներից ստացել է 43 դիմումներ, որոնք քննարկվել են և ժամանակին տրվել են պատասխաններ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 465 տեղեկանք, ստացվել է 94 պաշտոնական նամակներ, բոլորն

էլ քննարկվել և ժամանակին պատասխանվել են 104 նամակներով, գումարվել է ավագանու 4 նիստեր, համայնքի ղեկավարի 8 կարգադրություններ և 37 որոշումներ.

- Կատարվել է համայնքային սեփականություն հանդիսացող 7 հողամասերի օտարում աճուրդային վաճառքի կարգով, համայնքային սեփականություն հանդիսացող 2 հողամասերի վարձակալության տրամադրում և համայնքային սեփականություն հանդիսացող 1 հողամասի և նրա վրա ամրակայված շենք-շինության վարձակալության տրամադրում:
- Ժամանակին կատարվում է երեխաների բժշկական պրոֆիլակտիկ պատվաստումները, հաշմանդամության կարգ ունեցող բնակիչները և 0-7 տարեկան հիվանդ երեխաները ստանում են իրենց անհրաժեշտ, անվճար դեղորայքը.
- Մերձավան համայնքի ֆուտբոլային թիմը մշտապես մասնակցում է հանրապետական, մարզային առաջնություններին, ֆուտբոլի փնջային մրցաշարերին և բազմիցս արժանացել է պատվոգրերի.

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան «Մերձավան-98» թիմին 2012-2013թթ Հայաստանի ֆուտբոլի մանկապատանեական Մ-15/Բ/ առաջնությունում առաջին տեղը զբաղեցնելու համար հատկացրել դիպլոմ:

Վարչապետ Անդրանիկ Մարգարյանին հուշամրցաշարում 2013թ առաջին տեղը գրավելու համար ստացել են դիպլոմ և գավաթ: Բոլոր միջոցառումների կազմակերպմանը և մասնակիցների տեղափոխմանը աճակցել է գյուղապետարանը.

- Համայնքում գործում է „Արեգակ,, վարկավորման ծրագիրը, մասնակիցների թիվը շարունակական ավելանում է, որը համայնքի կին բնակիչներին հնարավորություն է տալիս զարգացնելու իրենց բիզնեսը.
- Համայնքում աղբահանման աշխատանքները կազմակերպելու համար փոխանցվել է 600 000 դրամ, այն կատարվում է շաբաթական երեք անգամ.
- Հաճախակի փոխվում է գիշերային լուսավորության վառված լամպերը, ծախսվել է 100 000 դրամ.
- 2013թ.առաջին կիսամյակում, Մերձավան համայնքի առաջին փողոցում փոխվել է խմելու ջրի 60 գծամետր երկարությամբ ջրագիծ, ծախսվել է 80.0 հազար դրամ.
- Ոռոգման հողային հունով առուների մեջ տեղադրվել է 250մ օգտագործված բետոնյա կիսախողովակներ և ծախսվել 110 000դրամ գումար:
- Համայնքի խաղահրապարակում տեղադրվել է սահնակներ և ճոճանակներ, Մասիսի փողոցում մոտ 200քառակուսի մետր տարածություն հարթեցվել է երկրորդ խաղահրապակը կառուցելու համար, ընդամենը ծախսվել է 500 000դրամ.
- Համայնքի կոյուղին շատ հին է և հաճախակի նորոգման կարիք է ունենում՝ 2013 թվականի առաջին կիսամյակում շուրջ 200 գծամետր կոյուղու ջրագիծ է մաքրվել՝ ծախսվել է 200 000 դրամ.
- Գյուղապետարանը, ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության .
- Գյուղապետարանը մշտապես աջակցում է բնակչության էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատակարարման, գազամատակարարման, կոյուղու սպասարկման ծառայություններ իրականացնող աշխատակիցներին.

2013թ-ին համայնքի հիմնախնդիրներն են.

1. Գյուղապետարանի շենքի տանիքի վերանորոգում
2. Դպրոցի վերանորոգում.
3. Ոռոգման համակարգի որոշակի հատվածի վերակառուցում
4. Փողոցների մասնակի ասֆալտապատում:

Ժողովի նախագահ՝

Ա. Եսայան

Ժողովի քարտուղար՝

Հ. Գևորգյան